

**ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**



IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Սույն գրքույկը նախատեսված է Իրանի Իսլամական Հանրապետություն մեկնողների համար: Գրքույկը պարունակում է տեղեկատվություն Իրան մուտքի, վիզային ռեժիմի, կացության, Իրանի քաղաքացիության, աշխատանքային օրենսդրության վերաբերյալ:

Բերվում են նաև միգրանտներին իրավական աջակցություն ցուցաբերող և նրանց շահերի պաշտպանություն իրականացնող հիմնական կազմակերպությունների տվյալները:



IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն



Սույն ուղեցույցը հրատարակվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Թրաֆիքինգի դեմ պայքարի ծրագրի ֆինանսավորմամբ:

Կազմեցին՝ **Քրիստինա Գալստյանը և Նունե Ասատրյանը**
Տպագրության պատրաստեց՝ **ՄՄԿ Հայաստանյան առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժինը:**

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է:** Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակների և հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

Հրատարակիչ՝ Միգրացիայի Միջազգային կազմակերպություն



IOM International Organization for Migration
OIM Organization Internationale pour les Migrations
OIM Organización Internacional para las Migraciones

Միգրացիայի միջազգային կազմակերպություն(ՄՄԿ)

Հայաստանյան առաքելություն

Հայաստան • Երևան 0010 • ՄՄԿ-ի գրասենյակ • Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ

Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33

65 • Էլ.փոստ՝ iom@iom.am • <http://www.iom.int/armenia>

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՉԵՏ ԿԱՊՎԱԾ ՉԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ 5**
- ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ 5**
- ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՄՏԸ 6**
- ԵՐԿԻՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ 7**
- ԻՐԱՆԻ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՅԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ 8**
- ՕՂԱՆԱՎԱԿԱՅԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՐՏՈՆԱԳԻՐ 8**
- ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ 9**
- ՄՈՒՏՔԻ ԿԱՄ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՅԱՄԱՐ 10**
- ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ 10**
- ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ 10**
- ՄՈՒՏՔԻ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՐՏՈՆԱԳԻՐ 11**
- ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ 11**
- ՄՈՒՏՔԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ 12**
- ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ 12**
- ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ 12**
- ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 12**
- ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 13**
- ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ 14**
- ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ 14**
- ՎՃԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 14**
- ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՍՏՈՒԳԱՏԵՍԸ ԵՎ ԱՆՅՐԱԺԵՇՏ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ 14**
- ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ ԵՎ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ 15**
- ՀԱՐԿՈՒՄ 15**
- ՈՎՔԵՐ ԵՆ ՀԱՐԿՎՈՒՄ ԻՐԱՆՈՒՄ 15**
- ՈՎՔԵՐ ՉԵՆ ՀԱՐԿՎՈՒՄ ԻՐԱՆՈՒՄ 16**
- ՈՐ ՕՐԵՆՔՈՎ Է ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ 16**
- ԻՐԱՆՈՒՄ ԱՐՏԱՍԱՅՄԱՆՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ 17**
- ԶՔԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ 18**
- ԻՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ 19**
- ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20**ԻՐԱՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 20

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Տվյալներ

Բնակչություն՝ 69 421 000 մարդ

ՀՆԱ մեկ շնչի հաշվով՝ 7 525 ԱՄՆ դոլար

Փոխանցումներ՝ 1 միլիարդ ԱՄՆ դոլար

Միգրացիայի գործակից՝ - 4,1 միգրանտ/1 000 բնակչի հաշվով

Ներգաղթյալներ՝ 2,8%

Ներգաղթյալների թվում կանանց տոկոսը՝ 39,7%

15 տարին չլրացած ազգաբնակչության տոկոսը՝ 28,8%

ՄԻԱՎ-ի տարածումը՝ 0,2%

Աշխատուժը՝ 26,2 միլիոն

Իրանը ՄԱԿ-ի անդամ պետություն է 2001 թ. նոյեմբեր ամսից

Միգրացիայի Միջազգային Կազմակերպության առաքելությունն Իրանում

Իրանի Իսլամական Հանրապետություն

Թեհրան

Մուլա Սադրայի պող.,

Շեյխ-Բահաի փողոց,

Քաշֆիան նրբանցք - 32

Հեռախոս +98.21 88 04 33 77

+98.21 88 06 04 42

+98.21 88 06 04 43

Ֆաքս +98.21 88 04 75 04

Կայքէջ՝ <http://www.iom.int/jahia/Jahia/pid/493>

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ

Իրանի Իսլամական Հանրապետությունն իր աշխարհաքաղաքական դիրքի, ժողովրդագրության և տնտեսական հնարավորությունների շնորհիվ հանդիսանում է ծագման, տարանցիկ և ընդունող երկիր միգրանտների համար: Իրանի Իսլամական Հանրապետությունը շարունակում է մնալ փախստականներ ընդունող աշխարհի խոշորագույն երկրներից մեկը: Իրանական համայնքը սփռված է Ասիայի հարավարևմտյան ողջ տարածաշրջանում, ինչպես նաև՝ տարածաշրջանի սահմաններից դուրս՝ Արևմտյան Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում: Երկիրը դեռևս մնում է խոցելի դիրքում անօրինական միգրացիայի տարբեր ձևերի, այդ թվում նաև թրաֆիքինգի և մաքսանենգության տեսանկյունից: Քանի որ Իրանի Իսլամական Հանրապետությունը ներկայումս կանգնած է միգրացիայի հետ կապված բազում նոր խնդիրների առջև, ուստի երկրի կառավարությունն առավել հետևողական մոտեցում է փնտրում ստեղծված իրավիճակի հաղթահարմանն ուղղված քաղաքականություն մշակելու և իր ինստիտուցիոնալ կառույցները կատարելագործելու համար:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԾՆՆԴՈՎ

Առհասարակ Իրանի տարածքում ծննդով երկրի քաղաքացիություն ինքնըստինքյան չի շնորհվում: Իրանի տարածքում ծննդյան դեպքում քաղաքացիություն է շնորհվում, եթե.

- * Երեխան ծնվել է անհայտ ծնողներից
- * Երեխայի ծնողները չունեն Իրանի քաղաքացիություն, սակայն նրանցից մեկը ծնվել է Իրանի տարածքում
- * Իրանի քաղաքացիություն չունեցող ծնողների երեխան տասնութ տարին լրանալուց հետո շարունակում է առնվազն մեկ տարի բնակվել Իրանում

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԾԱԳՈՒՄՈՎ

Իրանցի հորից ծնված երեխան՝ անկախ իր ծննդյան վայրից, ստանում Իրանի քաղաքացիություն:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՒՍՆՈՒԹՅԱՄԲ

Իրանցի տղամարդու հետ ամուսնացող այլազգի կինը քաղաքացիություն ստանալու իրավունք ունի:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՀՊԱՏԱԿԱԳՐՄԱՄԲ

Իրանի քաղաքացիությունը կարելի է ստանալ հետևյալ պայմանները բավարարելու դեպքում.

- եթե անձն առնվազն 18 տարեկան է, հինգ տարի ապրել է Իրանում և դասալրության կամ ծանր հանցանք գործելու համար որևէ երկրում չի դատապարտվել
 - Իրանի հպատակագրված քաղաքացիների կանայք և անչափահաս (18 տարին չլրացած) զավակները նույնպես Իրանի քաղաքացի են համարվում
- Իրանի Իսլամական Հանրապետությունը երկքաղաքացիություն չի ճանաչում:

Քացառություններ.

- Երբ իրանցի հորից ծնված երեխան ծննդյան իրավունքով քաղաքացիություն է ստանում այլ երկրում:
- Իրանցու հետ ամուսնացած այլազգի կինն ինքնընտիներյան Իրանի քաղաքացիություն է ստանում՝ անկախ քաղաքացիություն ստանալու դիմումից:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՄՏԸ

ԿԱՄԱՎՈՐ

Անձը կարող է սեփական կամքով հրաժարվել Իրանի քաղաքացիությունից, եթե լրացել է նրա առնվազն 25 տարին, և նա ծառայել է զինված ուժերում, կարգավորել երկրում իր բոլոր հարցերը և ստացել Նախարարների խորհրդի թույլտվությունը: Թեև Իրանի օրենսդրությամբ սահմանվում է քաղաքացիությունից հրաժարվելու կարգը, սակայն գործնականում փորձը ցույց է տալիս, որ դժվար է ստանալ Նախարարների խորհրդի թույլտվությունը, ինչը խոչընդոտ է դառնում օրինական ճանապարհով Իրանի քաղաքացիությունից հրաժարվելու համար:

ՀԱՐԿԱԴԻՐ

Որևէ երկրի քաղաքացիություն կամավոր ստանալու դեպքում անձն ինքնաբերաբար Իրանի քաղաքացիությունից չի զրկվում: Իրանի օրենսդրության համաձայն՝ այլ երկրի քաղաքացիություն ստացած Իրանի որևէ քաղաքացի, ով դիմել է այդ քայլի չհետևելով պատշաճ օրինական ընթացակարգերին, չի կարող արժանալ քաղաքացիությունից հրաժարվելու նրա որոշման ճանաչմանը Իրանի կառավարության կողմից: Նոր երկրում այդ անհատի ստացած կարգավիճակից ան-

կախ՝ Իրանը շարունակում է նրան Իրանի քաղաքացի համարել, իսկ որոշ դեպքերում՝ նաև նրա կնոջն ու զավակներին:

Անձնագրի տրման կամ վերաթողարկման դիմումներ

Անձնագրի տրման կամ վերաթողարկման հետ կապված ծախսերը կազմում են 75 եվրո: Նույն սակագինը կիրառվում է նաև անչափահասներին տրվող անձնագրի դեպքում:

Անձնագրի տրամադրման համար անհրաժեշտ աշխատանքային օրերի քանակը Առհասարակ անձնագրերի տրման գործընթացը տևում է առնվազն 4 շաբաթ, իսկ անձնագրերը վավերական են հինգ տարի ժամկետով:

Անձնագիր ստանալու հետ կապված ընդհանուր ընթացակարգեր և տեղեկություններ

Անձնագիր ստանալու ցանկություն ունեցող անձինք պետք է Իրանի դեսպանության հյուպատոսական բաժին ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Վավերական մուտքի արտոնագրով անձնագրի բնօրինակը
- Լրացրած (A1) ընդհանուր ձևը
- Մեկից չորս լուսանկար, որոնց դարձերեսին պետք է գրված լինի անհատի անունը, ընդ որում լուսանկարում տղամարդիկ պետք է պատկերված լինեն առանց գլխարկի ու ակնոցի, իսկ կանայք՝ գլխաշորով (պարսկ. հեջաբ): Եթե կան ուղեկցվող անձինք, ապա գործերին հարկ է կցել նաև 2 տարին լրացած ուղեկցվողների նկարները
- Անձնագրի 2-ից 9 էջերի և Իրանից ելքի կնիքով վերջին էջի պարզ լուսապատճենները

Նշում. Իսրայելի քաղաքացիների կամ անձնագրերում վավերական կամ անվավեր Իսրայելի մուտքի արտոնագիր ունեցող անձանց մուտքի դիմումն ամեն դեպքում կմերժվի: Եթե կանանց հագուստը անպարկեշտ համարվի, ապա նրանց չի թույլատրվի երկիր մուտք գործել:

Կոնտակտային տվյալներ

Քաղաքացիության հետ կապված հարցերը կարող եք ուղղել ներքոհիշյալ հասցեով.

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանություն

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոմիտասի պող., Բուդաղյան փող. 1

Էլեկտրոնային փոստ info@iranembassy.am.

www.iranembassy.am/

ԵՐԿԻՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Մուտքի արտոնագիրն անհրաժեշտ է այն օտարերկրյա քաղաքացիների համար, ովքեր ցանկանում են Իրան մեկնել պաշտոնական գործով, առևտրային բանակցությունների համար, տնտեսական, մշակութային կամ այլ հարցերին նվիրված սեմինարներին կամ համաժողովներին մասնակցելու նպատակով, կամ էլ աշխատանքի կամ սպորտի բերումով:

Պահանջվող փաստաթղթեր՝

1. Իրանական գործընկեր կազմակերպության, ասել է թե՛ ընդունող նախարարության, ընկերության կամ հաստատության կողմից տրված երաշխավորագրի մեկ օրինակ

2. Դիմողի՝ առնվազն մոտակա վեց ամսվա ընթացքում վավերական անձնագրի բնօրինակը
3. Մուտքի արտոնագիր ստանալու լրացրած դիմումի ձև՝ դիմողի ստորագրությամբ (մեկ օրինակ)
4. Վերջերս հանված անձնագրային չափի մեկ գունավոր լուսանկար
5. Պատվիրված նամակի կանխավճարված ծրար
6. Մուտքի արտոնագրի համար գանձվող վճար

ԻՐԱՆԻ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՀԱՍԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Իրանի ազատ առևտրային և արդյունաբերական գոտի՝ Կիշ կղզի մուտքի արտոնագիրը տրվում է կղզու նավահանգիստներում երկու շաբաթ ժամկետով և կարող է նշված տարածքի իշխանությունների միջնորդությամբ երկարացվել մինչև վեց ամիս ժամկետով:

Նշում. Երկրի այլ շրջաններ ուղևորվելու մտադրություն ունեցող օտարերկրյա քաղաքացիները պետք է դիմում ներկայացնեն Իրանի Արտաքին գործերի նախարարության տեղի ներկայացուցչություն, որը քննում է դիմումը և դրան հավանություն տալու դեպքում 48 ժամվա ընթացքում դիմողին մուտքի արտոնագիր տալիս:

Պահանջվող փաստաթղթեր՝

- 1 - Մուտքի արտոնագիր ստանալու դիմումի մեկ լրացրած ձև
- 2 - Դիմողի անձնագիրը, որը պետք է վավերական լինի առնվազն մոտակա 6 ամսվա ընթացքում և ունենա առնվազն երկու դատարկ էջ
- 3 - Անձնագրի պատճենը (անձը հաստատող էջը)
- 4 - Անձնագրային չափի մեկ վերջերս հանված լուսանկար (3 x 4 չափի)
- 5 - Մուտքի արտոնագրի վճար, որը մուծվում է Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության անունով դուրս գրված բանկային չեկի միջոցով

Նշում. Վճարները կանխիկով չեն ընդունվում

- 6 - Վերադարձի ծրար՝ պատվիրված նամակի համար փոստային ծախսերի կանխավճարով և նշված հասցեով

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՐՏՈՆԱԳԻՐ

ա. Մեհրաբադի օդանավակայանում գործարարներին 72 ժամով օդանավակայանի մուտքի արտոնագիր է տրվում:

բ. Օդանավակայանի տարանցիկ արտոնագիրը տրվում է 48 ժամով այն դիմողներին, ում համար Իրանը տարանցիկ երկիր է:

Պահանջվող փաստաթղթեր՝

- 1 - Մուտքի արտոնագիր ստանալու դիմումի մեկ ձև, որը պետք է լրացվի Մեհրաբադ օդանավակայանում
- 2 - Դիմողի անձնագիրը, որը պետք է վավերական լինի առնվազն մոտակա 6 ամսվա ընթացքում և ունենա առնվազն երկու դատարկ էջ
- 3 - Անձնագրի պատճենը (անձը հաստատող էջը)

- Դեպի երրորդ երկիր հաստատված տոմս՝ 48 ժամով տարանցիկ մուտքի արտոնագիր ստանալու դիմողների համար

- Դեպի երրորդ երկիր հաստատված տոմս՝ 72 ժամով մուտքի արտոնագիր ստանալու դիմողների համար

Վերոնշյալ փաստաթղթերը և Իրանում երաշխավոր կազմակերպության գրավոր դիմումը պետք է ուղարկվեն Մեիրաբադ օդանավակայանին կից Իրանի Արտաքին գործերի նախարարության անձնագրերի և վիզաների վարչություն:

4 - Անձնագրային չափի մեկ վերջերս հանված լուսանկար (3 x 4)

5 - Մուտքի արտոնագրի վճար, որը մուծվում է Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության անունով դուրս գրված բանկային չեկի միջոցով

Նշում. Վճարները կանխիկով չեն ընդունվում:

6 - Վերադարձի ծրար՝ պատվիրված նամակի համար փոստային ծախսերի կանխավճարով և նշված հասցեով

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՍՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Տուրիստական մուտքի արտոնագիրը նախատեսված է այն օտարերկրյա քաղաքացիների համար, ովքեր ցանկանում են Իրան այցելել երկրի տեսարժան վայրերը դիտելու կամ ընկերներին ու բարեկամներին տեսակցելու նպատակով: Ուտագնացության մուտքի արտոնագիրը նախատեսված է այն օտարերկրյա քաղաքացիների համար, ովքեր ցանկանում են այցելել Իրանի սրբավայրերը:

Ու շ ա դ ր ու թ յ ու՛ մ .

2005թ. մայիսի 30-ի դրությամբ Նոր Ձեւանդիայի այն քաղաքացիները, ովքեր ունեն սովորական վավերական (ոչ թե դիվանագիտական կամ ծառայողական) անձնագիր և ցանկանում են Իրան այցելել որպես զբոսաշրջիկ, կարող են ժամանելուց հետո դիմում ներկայացնել մեկ շաբաթ ժամկետով իրանական տուրիստական մուտքի արտոնագիր ստանալու համար հետևյալ օդանավակայաններում՝ Թեհրան (Իմամ Խոմեյնի (Ռուհոլահ) և Մեիրաբադ), Շիրազի, Մաշ-հադի, Թավրիզի օդանավակայաններում Դիմողները պետք է ժամանելուն պես դիմեն նշված օդանավակայանների ժամանման դահլիճում գտնվող Իրանի Արտաքին գործերի նախարարության վիզաների և անձնագրերի վարչության վերոնշյալ բաժիններ:

Այս ծառայությունը չի վերաբերում հետևյալ անձանց.

- Դիվանագիտական և ծառայողական անձնագիր ունեցողներ
- Արտասահմանցի լրագրողներ և թղթակիցներ, ովքեր մտադիր են զբաղվել մասնագիտական գործունեությամբ, ընդ որում հայտարարագրված մտադրության ցանկացած խախտում կհանգեցնի երկրից նրանց վտարմանը
- Այն անձինք, ում դիմումները նախկինում մերժվել են
- Իրանի քաղաքացիությունը պահպանած արտագաղթյալներ

Բոլոր այն տուրիստական գործակալությունները, որոնք ցանկանում են էլ ավելի դյուրացնել իրենց հաճախորդների ժամանումը, պետք է 24 ժամ առաջ նախնական պայմանավորվածություն ձեռք բերեն Իրանի Արտաքին գործերի նախարարության վիզաների և անձնագրերի վարչության հետ

Պահանջվող փաստաթղթեր՝

1. Դիմողի՝ առնվազն մոտակա վեց ամսվա ընթացքում վավերական անձնագրի բնօրինակը

2. Մուտքի արտոնագիր ստանալու լրացրած դիմումի ձև՝ դիմողի ստորագրությամբ (մեկ օրինակ)
3. Վերջերս հանված անձնագրային չափի մեկ գունավոր լուսանկար
4. Պատվիրված նամակի կանխավճարված ծրար
5. Մուտքի արտոնագրի համար գանձվող վճար

ՄՈՒՏՔԻ ԿԱՍ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԲԵՆՆԱՓՈԽԱԴՐՈՂ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս արտոնագիրը տրվում է դեպի Իրան կամ այլ երկրներ բեռ փոխադրող մեքենաների վարորդներին: Նման դեպքերում անհրաժեշտ է նախնական պայմանավորվածություն ձեռք բերել Իրանի Իսլամական Հանրապետության դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների հետ:

Պահանջվող փաստաթղթեր՝

- 1 - Մուտքի արտոնագիր ստանալու մեկ լրացրած դիմումի ձև
- 2 - Դիմողի անձնագիրը, որը պետք է վավերական լինի առնվազն մոտակա 6 ամսվա ընթացքում և ունենա առնվազն երկու դատարկ էջ
- 3 - Անձնագրի պատճենը (անձը հաստատող էջը)
- 4 - Դեպի այլ երկրներ բեռներ փոխադրող վարորդների համար երրորդ երկիր մուտք գործելու արտոնագիր
- 5 - Անձնագրային չափի մեկ վերջերս հանված լուսանկար (3 x 4)
- 6- Մուտքի արտոնագրի վճար, որը մուծվում է Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության անունով դուրս գրված բանկային չեկի միջոցով
- 7 - Վերադարձի ծրար՝ պատվիրված նամակի համար փոստային ծախսերի կանխավճարով և նշված հասցեով

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Լրագրողների մուտքի արտոնագիրը նախատեսված է օտարերկրյա այն քաղաքացիների համար, ովքեր ցանկանում են այցելել Իրան որպես իրադարձությունները լուսաբանող տպագիր կամ էլեկտրոնային լրատվամիջոցների թղթակիցներ:

Պահանջվող փաստաթղթեր՝

1. Դիմողի՝ առնվազն մոտակա վեց ամսվա ընթացքում վավերական անձնագրի բնօրինակը
2. Մուտքի արտոնագիր ստանալու լրացրած դիմումի ձև՝ դիմողի ստորագրությամբ (մեկ օրինակ)
3. Վերջերս հանված անձնագրային չափի մեկ գունավոր լուսանկար
4. Պատվիրված նամակի կանխավճարված ծրար
5. Մուտքի արտոնագրի համար գանձվող վճարներ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Ուսանողական մուտքի արտոնագիրը տրվում է օտարերկրյա այն քաղաքացիներին, ովքեր մտադիր են սովորել Իրանի Իսլամական Հանրապետությունում:

Պահանջվող փաստաթղթեր՝

- 1 - Մուտքի արտոնագիր ստանալու մեկ լրացրած դիմումի ձև

- 2- Դիմողի անձնագիրը, որը պետք է վավերական լինի առնվազն մոտակա 6 ամսվա ընթացքում և ունենա առնվազն երկու դատարկ էջ
 - 3 - Անձնագրի պատճենը (անձը հաստատող էջը)
 - 4 - Տեղեկանք հավատարմագրված կրթական հաստատություն ընդունվելու մասին
 - 5 - Անձնագրային չափի մեկ վերջերս հանված լուսանկար (3 x 4)
 - 6 - Մուտքի արտոնագրի գանձում, որը մուծվում է Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության անունով դուրս գրված բանկային չեկի միջոցով
- Նշում.** Վճարները կանխիկով չեն ընդունվում:
- 7 - Վերադարձի ծրար՝ պատվիրված նամակի համար փոստային ծախսերի կանխավճարով և նշված հասցեով

ՄՈՒՏՔԻ ՏԱՐԱՆՑԻԿ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Մուտքի տարանցիկ արտոնագիրը տրվում է սահմանափակ ժամկետով այն օտարերկրացիներին, ովքեր մտադիր են անցնել Իրանի տարածքով դեպի երրորդ երկիր:

Պահանջվող փաստաթղթեր՝

- Մուտքի արտոնագիր ստանալու երկու լրացրած դիմումի ձև
- Առնվազն 6 ամսվա ընթացքում վավերական անձնագիր
- 3 վերջերս հանված լուսանկար (3x4 չափով)
- Դեպի երրորդ երկիր մուտքի ստացված արտոնագիր
- Հաստատված ավիատոմսեր օդանավով ուղևորվող անձանց համար
- Մուտքի արտոնագրի համար գանձումների վճարում
- Վերադարձի ծրար դիմողի հասցեով և պատվիրված նամակի փոստային ծախսերի կանխավճարով
- Հարցազրույց՝ անհրաժեշտության դեպքում

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Դիվանագիտական և ծառայողական մուտքի արտոնագիրը տրվում է Նոր Զելանդիայի բարձր պաշտոնատար անձանց, պետական պաշտոնյաններին և օտարերկրյա քաղաքացիներին, ովքեր ցանկանում են ուղևորվել Իրան պաշտոնական այցի շրջանակներում (Իրանի հրավերով) կամ պետք է ստանձնեն մշտական կամ ժամանակավոր, դիվանագիտական կամ վարչական իրենց պաշտոնը դիվանագիտական կամ հյուպատոսական առաքելությունում կամ միջազգային կազմակերպությունում:

Պահանջվող փաստաթղթեր՝

1. Բանավոր հայտագիր Նոր Զելանդիայի արտաքին գործերի և առևտրի վարչությունից կամ համապատասխան օտարերկրյա առաքելությունից կամ նշանակումը հաստատող գրություն Նոր Զելանդիայում հավատարմագրված միջազգային կազմակերպությունից
2. Դիմողի՝ առնվազն մոտակա վեց ամսվա ընթացքում վավերական անձնագրի բնօրինակը
3. Դիմողի կողմից լրացված մուտքի արտոնագրի ստանալու դիմումի ձև (մեկ օրինակ)
4. Վերջերս հանված անձնագրային չափի մեկ գունավոր լուսանկար

ՄՈՒՏՔԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐՏՈՆԱԳԻՐ

Մուտքի էլեկտրոնային արտոնագիրը կարելի է ստանալ առցանց հետևյալ հասցեով՝ <http://www.mfa.gov.ir/cms/cms/Tehran/en/evisa/>

ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄ

Մուտքի այս արտոնագիրը տրվում է օտարերկրյա այն քաղաքացիներին, ովքեր մտադիր են աշխատել Իրանում: Իրանում ընդունող կողմը համապատասխան մարմիններից պետք է կանխավ աշխատանքի թույլտվություն ստանա:

Պահանջվող փաստաթղթեր`

- 1 - Մուտքի արտոնագիր ստանալու մեկ լրացրած դիմումի ձև
- 2 - Դիմողի անձնագիրը, որը պետք է վավերական լինի առնվազն մոտակա 6 ամսվա ընթացքում և ունենա առնվազն երկու դատարկ էջ
- 3 - Անձնագրի պատճենը (անձը հաստատող էջը)
- 4 - Անձնագրային չափի մեկ վերջերս հանված լուսանկար (3 x 4)
- 5 - Մուտքի արտոնագրի վճար, որը մուծվում է Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության անունով դուրս գրված բանկային չեկի միջոցով Նշում. Վճարները կանխիկով չեն ընդունվում:
- 6 - Վերադարձի ծրար` պատվիրված նամակի համար փոստային ծախսերի կանխավճարով և նշված հասցեով

ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ

Մուտքի արտոնագրի ժամկետի երկարացումը, այդ թվում` սովորական մուտքի, զբոսաշրջիկի և ուխտագնացի մուտքի արտոնագրերի համար, տրվում է Օտարերկրացիների հարցերով գրասենյակի օրինապահ մարմինների վարչության կողմից հիմնավոր պատճառներով և նշված վարչության հավանությամբ:

Դիվանագիտական և ծառայողական մուտքի արտոնագրեր

Դիվանագիտական և ծառայողական մուտքի արտոնագրերը երկարացվում են Իրանի Արտաքին գործերի նախարարության կողմից Թեհրանում համապատասխան օտարերկրյա առաքելության խնդրանքով:

Աշխատանքի թույլտվությամբ մուտքի արտոնագրի երկարացում

Աշխատանքի թույլտվությամբ մուտքի արտոնագրերը երկարացվում են Իրանում դիմողին ընդունող կողմի հայտի հիման վրա Օտարերկրացիների հարցերով գրասենյակի օրինապահ մարմինների վարչության կողմից` Իրանի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Օտարերկրացիների աշխատանքի հարցերով վարչության հետ համատեղ:

ԿԱՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Իրանում օտարերկրացիների կացությունը լինում է երկու տեսակի.

Ա - Մշտական կացություն

Բ - Ժամանակավոր կացություն

Մշտական կացության թույլտվությունը տրվում է այն օտարերկրացիներին, ովքեր ընտրել են Իրանը որպես մշտական բնակության վայր, հակառակ դեպքում` օտարերկրյա քաղաքացու կացության թույլտվությունը համարվում է ժամանակավոր: Մշտական և ժամանակավոր կացության թույլտվությունը տրվում է Օտարերկրացիների հարցերով գրասենյակի օրինապահ մարմինների վարչության կողմից Իրանի տարածք ժամանելուց 8 օր անց:

Օտարերկրյա քաղաքացիները թույլատրված ժամկետից ավել իրանում մնալ չեն կարող, և սահմանված ժամկետը գերազանցելու դեպքում նրանց նկատմամբ միջոցներ կկիրառվեն ըստ գործող կանոնակարգի:

Ժամանակավոր և մշտական կացության թույլտվությունները կարող են վերաթողարկվել և երկարացվել: Ելքի թույլտվությունն օտարերկրացի քաղաքացիներին նույնպես տրվում է վերոնշյալ գրասենյակի կողմից:

2008 թվականի մարտի 21-ից Նորդուզ սահմանային անցակետում 33 քաղաքացիներին տրվում են իրանի Իսլամական Հանրապետության մուտքի արտոնագրերի հետևյալ տեսակները.

1. 3 օր տևողությամբ - 20 եվրո
2. 10 օր տևողությամբ - 30 եվրո
3. 21 օր տևողությամբ - 50 եվրո

Արտոնագրի տրման համար անհրաժեշտ փոստաթղթեր

1. անձնագիր
2. 2 նկար
3. լրացված հարցաշար արտոնագրի տրման համար
4. արտոնագրի գումարի մուծման անդորրագիր «Մելի» բանկի Նորդուզ մասնաճյուղի կողմից տրված արտոնագրերի տրման գրասենյակն աշխատում է առավոտյան 8:00 – 17:00-ը, հանգստյան օրեր՝ հինգշաբթի և ուրբաթ:

Ի գիտություն իրանի Իսլամական Հանրապետություն այցելող անձանց՝

Իրանի Իսլամական Հանրապետություն մեկնող Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, երկրի բարոյականության, իսլամական և ազգային արժեքները հարգելով հանդերձ, պետք է հաշվի առնեն հետևյալը.

1. Իրանի Իսլամական Հանրապետության տարածք ժամանելուն պես և երկրում գտնվելու ողջ ընթացքում կանայք պետք է լիովին հետևեն հագուստի հարցում ընդունված իսլամական կանոններին:
2. Արգելված է երկիր ներմուծել ցանկացած տեսակի երաժշտական գործիք, ոգելից խմիչք կամ թմրամիջոց:
3. Արգելված է երկիր ներմուծել տեսաերիզներ և ձայներիզներ, ինչպես նաև էթիկայի կանոններին հակասող պատկերներ:
4. Իսլամի էթիկայի կանոններին հակասող վարքագիծ դրսևորած անձանց նկատմամբ կիրառվում է սահմանված կանոնակարգը, ինչը կարող է երկրի տարածքից նրանց վտարման և ապագայում իրանի մուտքի արտոնագիր ստանալու նրանց դիմումի մերժման պատճառ դառնալ:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Օրենքով արգելված է օտարերկրյա քաղաքացիներին աշխատանքի ընդունել առանց աշխատանքի պատշաճ թույլտվության: Դիվանագետները, Միավորված ազգերի կազմակերպության և արտասահմանյան լրատվամիջոցների աշխատակիցներն ազատված են այս պահանջից: Օտարերկրյա քաղաքացուն աշխատանքի թույլտվություն է տրվում միայն, եթե բավարարվում են հետևյալ պահանջները.

- 1. Իրանի քաղաքացիների մոտ մասնագիտական հմտությունների պակաս որևէ բնագավառում
- 2. Տվյալ աշխատանքի համար օտարերկրյա քաղաքացու որակավորում
- 3. Օտարերկրյա քաղաքացու մասնագիտական հմտություններն օգտագործվելու են Իրանի քաղաքացիներին պատրաստելու և նրանցով հետագայում օտարերկրյա մասնագետին փոխարինելու համար Աշխատանքի թույլտվությունները տրվում, վերաթողարկվում կամ երկարացվում են առավելագույնը մեկ տարի ժամկետով: Ավելին, օտարերկրյա քաղաքացին չի կարող ստանալ ելքի թույլտվություն, եթե նա չի վճարել բոլոր անհրաժեշտ հարկերը, տուրքերը և այլն:

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ

Ներկրումների լիցենզավորումը, սակագները և հարկերը

Լիցենզավորման, սակագների և հարկերի գծով Իրանի կառավարությունը կարող է ներկրողներից գանձել մի շարք վճարներ: Ապրանքների մեծ մասը ենթակա է որոշ տեսակի գանձումների: Կարևոր է Իրանում ձեր երկրի դեսպանությունից այս հարցի շուրջ ստույգ տեղեկություններ ստանալ, քանզի ներկրումը կարգավորող կանոնակարգերը հաճախ փոխվում են: Իրան ապրանքներ ներկրելու համար պահանջվում է Իրանի Առևտրի նախարարության կողմից տրվող ընդհանուր լիցենզիա: Դրանից բացի ներկրողից պահանջվում է ստանալ համապատասխան նախարարության թույլտվությունը (օրինակ՝ Իրանի Առողջապահության նախարարության թույլտվությունը դեղորայքի պարագայում): Տուրքերի մեծ մասը սահմանվում է ըստ արժեքի: Արտասահմանյան ներդրումների նպատակով ներկրվող արտադրական միջոցներն ու հումքը կարող են ազատվել սովորական տուրքերից: Նմանապես տուրքերից ազատվում են դեղորայքը, ցորենը և այլ ռազմավարական նշանակության ապրանքատեսակները: Այդուհանդերձ, ներկրվող ապրանքատեսակներից շատերը ոչ միայն լիցենզավորման վճարների և տուրքերի, այլև՝ հարկման են ենթակա:

ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Արտարժույթի փոխանակման հսկումը վերապված է Կենտրոնական բանկին (Բանկ Մարքագի): Արտարժույթի փոխանակման բոլոր գործարքները պետք է իրականացվեն Կենտրոնական բանկի կամ լիազորված բանկերի միջոցով:

ՎՃԱՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Նախընտրելի են հաստատված անհետկանչելի ակրեդիտիվները: Նախկինում առևտրային գործարքներում ընդունված էր օգտագործել 360 օր ժամկետով հաստատված անհետկանչելի ակրեդիտիվներ, սակայն ներկայումս սովորական են ժամկետային ցպահանջ ակրեդիտիվները: Այսօր ավելի շատ են տարածված ապրանքների և հատկապես նավթի փոխանակմամբ գործարքային պայմանները: Վերջին տարիներին Իրանն իր պարտքերը մարելու առումով բարի համբավ է ձեռք բերել:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՈՒՔՄԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՍՏՈՒԳԱՏԵՍԸ ԵՎ ԱՆՋՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

500 000 իրանական ռիալ գնահատված արժեքով ներկրվող ապրանքների խմբաքանակները պետք է ծագման երկրում ստուգատես անցնեն միջազգային մակարդակով ճանաչում վայելող կազմակերպության կողմից՝ ապրանքի քանակն ու որակը հաստատելու նկատառումով: Ներկրվող ապրանքների մեծ խմբաքանակներ

րի դեպքում Իրան առաքվող ապրանքների համար պետք է տրվեն Իրանի հյուպատոսական ծառայության և մատակարարի երկրի առևտրի պալատի կողմից վավերացված հաշիվ-ապրանքագրեր, ծագման վկայականներ, բեռնագրեր և ստուգատեսի վկայականներ:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ ԵՎ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Ապրանքների նմուշները կարող են ներկրվել առանց մաքսային տուրքերի, եթե այդ նմուշները չունեն առևտրային արժեք կամ ունեն ցածր առևտրային արժեք, կամ եթե դրանք օգտագործման համար պիտանի չեն: Փոքր քանակով գովազդային նյութերի ներկրումը ազատված է տուրքերից: Արժեքավոր նմուշները կարելի է ներկրել բարի համբավ ունեցող իրանցի գործարարի՝ դրանք սահմանված ժամկետում կրկին արտահանելու մասին պարտավորագրի կամ երաշխավորագրի հիման վրա: Իրանն անդամակցում է Առևտրային նմուշների և գովազդային նյութերի ներկրումը դյուրացնելու մասին միջազգային կոնվենցիային:

ՀԱՐԿՈՒՄ

Իրանի նոր հարկային օրենսդրությամբ իրավաբանական անձ հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների համար նախատեսվում է հարկման հաստատագրված դրույթաչափ: Հարկման հաստատագրված դրույթաչափը կազմում է 25 տոկոս: Նոր հարկային օրենսդրությամբ բաժնետերերը չեն հարկվում: Քաղաքացիական ծառայողների վարձատրության համակարգման մասին թիվ 06/13/1370 օրենքով աշխատակիցների եկամտահարկի հաստատագրված դրույթաչափն առանց նշված օրենքում նախատեսված արտոնությունների կազմում է 10 տոկոս: Ինչ վերաբերում է աշխատավարձ ստացող այլ անձանց, ապա նրանց աշխատավարձով վաստակած եկամտի մինչև 42 000 000 իրանական ռիալ գումարը՝ հանած ներկա օրենքով նախատեսված հարկային արտոնությունները, հարկվում է նույն 10 տոկոս հաստատագրված դրույթաչափով, իսկ նրանց եկամտի մնացած մասի նկատմամբ կիրառվում են 131-րդ հոդվածում ամրագրված դրույթաչափերը:

ՈՎԹԵՐ ԵՆ ՀԱՐԿՎՈՒՄ ԻՐԱՆՈՒՄ

Ուղիղ հարկման մասին Իրանի օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ հարկման են ենթակա հետևյալ անձինք. (1) (B) կետի դրույթների համաձայն՝ բոլոր ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող սեփականատերերն անկախ կարգավիճակից վճարում են հարկ իրենց անձնական և անշարժ գույքի դիմաց:

(2) Իրանում բնակվող ցանկացած իրանցի ֆիզիկական անձ Իրանում կամ արտասահմանում վաստակած իր ողջ եկամտից վճարում է հարկ:

(3) Արտասահմանում բնակվող ցանկացած իրանցի ֆիզիկական անձ Իրանում վաստակած իր ողջ եկամտից վճարում է հարկ:

(4) Իրանական ցանկացած իրավաբանական անձ Իրանում կամ արտասահմանում վաստակած իր ողջ եկամտից վճարում է հարկ:

(5) Ցանկացած ոչ իրանական ֆիզիկական կամ իրավաբանական անձ վճարում է հարկ Իրանում վաստակած իր եկամտից, ինչպես նաև Իրանում արտոնագրերի և այլ իրավունքների շնորհման արդյունքում գոյացած եկամտի աղբյուրներից կամ մասնագիտական դասընթացներ տալու կամ տեխնիկական աջակցության տրամադրելու դիմաց ստացված եկամտից, ինչպես նաև կինոնկարների փոխանցման համար՝ անկախ նրանից, թե այդ եկամուտը ստացվել է որպես կինոնկարի վաճառքի գին, թե՛ որպես դրա ցուցադրման համար զանձվող վարձ կամ գոյացել է իրավունքների իրացման արդյունքում:

ՈՎԵՆՐ ՉԵՆ ՀԱՐԿՎՈՒՄ ԻՐԱՆՈՒՄ

Օրենքով հարկման ենթակա չեն հետևյալ անձինք.

- (1) Պետական նախարարությունները և հաստատությունները
- (2) Պետական բյուջեից ֆինանսավորվող հաստատությունները
- (3) Քաղաքային և տեղական ինքնակառավարման այլ մարմիններ

Նշում 1. Այն ընկերությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ պատկանում է վերոնշյալ կետերում նշված անձանց կամ հաստատություններին, ենթակա չէ սույն հոդվածի դրույթներին՝ իրենց եկամտի այդ մասով, որը պատկանում է նշված անձանց և հաստատություններին: Այս նշման մեջ ամրագրված կանոնը չի ազդում ընկերությունների՝ սույն օրենքով նախատեսված արտոնություններից օգտվելու կարողության վրա, եթե այդ արտոնությունները կիրառելի են նրանց դեպքում:

Նշում 2. Տնտեսական գործունեությունից, օրինակ՝ արդյունաբերական և հանքարդյունաբերական շահագործման, առևտրային գործունեության, ծառայությունների մատուցման և արտադրության այլ ոլորտներում այս հոդվածով նախատեսված անձանց կողմից ստացված եկամուտը (նաև ընկերության գործունեության հետ կապ չունեցող ճանապարհներով) հարկվում է առանձին՝ 105-րդ հոդվածում նշված դրույթաչափով: Նման դեպքերում գործերի կառավարման համար պատասխանատու անձինք պարտավոր են վերոնշյալ գործունեությանը վերագրելի եկամտի մասով իրենց պարտականությունները կատարել սույն օրենքին համապատասխան: Հակառակ դեպքում այդ անձինք և համապատասխան հարկատուները կրելու են համատեղ և առանձին պարտավորություն կիրառելի հարկերի վճարման համար:

Նշում 3. Եթե սույն հոդվածում մեջբերվող ազատունը հարկերից տրվում է Հագրաթ Իման Խոմեյնիի (եղիցի փառքն Աստծո նրա հետ) կամ գերագույն հոգևոր առաջնորդի թույլտվությամբ, ապա համապատասխան հարցերը կարգավորվում են գերագույն հոգևոր առաջնորդների հայեցողությամբ:

Ո՞Ր ՕՐԵՆՔՈՎ Է ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ՍԱՆՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԻՐԱՆՈՒՄ

Արտասահմանյան ընկերությունների և ներկայացուցչությունների գրանցման մասին օրենքը բերված է 17.12.1997 թ. (26.9.1376) թիվ 15384 պաշտոնական տեղեկագրում և 25.11.1997 թ. (4.9.1376) թիվ 1592 տեղեկագրում և դրա միակ հոդվածով նախատեսում է հետևյալը. «Գրանցման երկրում իրավաբանական անձ համարվող արտասահմանյան ընկերությունները՝ դրանք կարգավորող երկրում փոխադարձ ընթացակարգերի առկայության դեպքում, կարող են գրանցել իրենց մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները և իրականացնել Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության կողմից որոշված գործունեությունը՝ գործող օրենքներին և կանոնակարգերին համապատասխան»:

Նշում. այս օրենքի գործադիր կանոնակարգերը կազմվում են Իրանի Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության կողմից՝ իրավասու այլ մարմինների հետ համատեղ և ներկայացվում Նախարարների խորհրդի հաստատմանը: Մեկ հոդված և մեկ նշում պարունակող այս օրենքը հավանության է արժանացել Միջազգային կոոպերատիվ միության 1997 թ. նոյեմբերի 12-ին կայացած բաց նիստին և հաստատվել է դրա Հոգաբարձուների խորհրդի կողմից 1997 թ. նոյեմբերի 19-ին:

**ԻՐԱՆՈՒՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ**

Նախարարների խորհուրդը՝ 1999 թ. մարտի 31-ին (11.1.1378) անցկացրած համ-
դիպմանը Իրանի Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության առաջարկով և
Իրանում արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուց-
չությունների գրանցումը թույլատրող 1997 թվականին վավերացրած օրենքի միակ
հոդվածին կից բերված նշմանը համապատասխան, հավանության է արժանացրել
օրենքի հետևյալ գործադիր կանոնակարգը.

Հոդված 1. Արտասահմանյան ընկերությունը, որը ճանաչված և ընդունված է
որպես իրավաբանական անձ գրանցման երկրում, կարող է Իրանում գրանցել իր
մասնաճյուղը կամ ներկայացուցչական գրասենյակը ներքոշարադրյալ գործու-
նեությունն իրականացնելու համար՝ պահպանելով փոխադարձության սկզբունքը
և պատշաճ կատարելով այդտեղ զետեղված պահանջները, ինչպես նաև՝ համա-
պատասխան այլ պարտավորությունները.

1. Ետվաճառքային ծառայություններ արտասահմանյան ընկերության կողմից մա-
տակարարված ապրանքի և մատուցված ծառայությունների համար
2. Իրանական և արտասահմանյան ընկերությունների միջև կնքված պայմանագրե-
րով նախատեսված աշխատանքների իրականացում
3. Իրանում արտասահմանյան ընկերության կողմից կատարվելիք ներդրման հիմ-
քերի ուսումնասիրություն և պատրաստում
4. Համագործակցություն Իրանում տեղակայված տեխնիկական և մեքենաշի-
նական ընկերությունների հետ՝ երրորդ երկրում աշխատանքներ կատարելու նկա-
տառումով
5. Իրանից արտահանվող ապրանքատեսակների խթանումը՝ բացառությամբ նավ-
թի և նավթամթերքի
6. Տեխնիկական և մեքենաշինական ծառայությունների, ինչպես նաև տեխնոլո-
գիայի և տեխնիկական գործիմացության փոխանցում Իրանին
7. Իրանի կառավարության կողմից պատշաճ կերպով արտոնագրված մարմինների
կողմից օրինապես լիցենզավորված գործունեություն այնպիսի բնագավառներում
ինչպիսիք են՝ փոխադրումները, ապահովագրումը, ապրանքների ստուգատեսը,
բանկային գործը, շուկայավարումը և այլն:

Հոդված 2. Արտասահմանյան ընկերության մասնաճյուղը հանդիսանում է գլխա-
մաս ընկերության տեղական գրասենյակը, որն ուղղակիորեն գործում է գլխամաս
ընկերության նպատակների և պարտականությունների շրջանակում: Ուստի, նման
մասնաճյուղի աշխատանքային գործունեությունն իրականացվում է ընկերության
գլխամաս գրասենյակի անունից և պատասխանատվությամբ:

Հոդված 3. Իրանում գրանցվելու ցանկություն ունեցող ընկերությունը պետք է
գրավոր դիմումին կից Ընկերությունների և արդյունաբերական հիմնարկների
գրանցման վարչություն ներկայացնի հետևյալ տեղեկություններն ու փաստա-
թղթերը.

1. Իրավասու մարմիններում գրանցված ընկերության կանոնադրությունը, գրանց-
ման վկայագիրը և վերջին արված փոփոխությունները
2. Ընկերության վերջին հաստատված ֆինանսական հաշվետվությունը
3. Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկություններ պարունակող իրա-
գործելիության հաշվետվությունը, որտեղ պետք է նշվի Իրանում մասնաճյուղ
գրանցելու պատճառը, գրասենյակի լիազորությունները և գործունեության ոլոր-
տը, գրասենյակի շահագործման համար անհրաժեշտ իրանական և արտասահ-
մանյան աշխատուժի քանակը, ինչպես նաև արտարժույթով և իրանական ռիալով
ֆինանսավորման նախատեսված աղբյուրը:

Պահանջվող փաստաթղթեր

Իրանում ընկերության մասնաճյուղ հիմնելու հարցով դիմողները պետք է Իրանի Ընկերությունների գրանցման վարչություն ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ընկերության գրավոր դիմում
2. Ընկերության կանոնակարգի, գրանցման վկայականի և դրանցում արված վերջին փոփոխությունների մասին իրավասու մարմիններին ուղղված ծանուցման նոտարի կողմից վավերացրած պատճենները
3. Ջեկույց, որում պետք է ընդգրկվեն.
 - ա) տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ
 - բ) Իրանում ընկերության մասնաճյուղ բացելու անհրաժեշտության հիմնավորում
 - գ) Ընկերության մասնաճյուղին վերապահված լիազորությունների բնույթը և շրջանակը և մասնաճյուղի գործունեության նպատակը
 - դ) պահանջվող մարդկային ռեսուրսների գնահատական՝ առանձին իրանցի և արտասահմանցի աշխատակիցների կտրվածքով
 - ե) մասնաճյուղի տեղական պահանջների ֆինանսավորման եղանակը (արտարժույթով և իրանական ռիալով)
4. Նամակ պետական գերատեսչությունից, եթե ընկերությունն այդ գերատեսչության հետ ունի կնքած պայմանագիր
5. Մասնաճյուղի գրանցման հայտ

Մենք կլրացնենք մասնաճյուղի գրանցման հայտը և այն կուղարկենք ձեզ անհրաժեշտ ձևաբանությունների կատարման համար:

6. Մասնաճյուղի տնօրենին տրված օտարերկրյա ընկերության անունից գործելու լիազորագիր
7. Տեղական ներկայացուցչի կողմից տրված երաշխավորագիր Իրանի իրավասու մարմինների կողմից մասնաճյուղի գործունեության դադարեցման դեպքում մասնաճյուղը փակելու համար ընթացակարգեր սկսելու պարտավորության մասին
8. Վերջին աուդիտային և ֆինանսական հաշվետվություններ՝ նոտարի վավերացմամբ

Խնդրում ենք հաշվի առնել, որ Իրանի տարածքից դուրս կազմված բոլոր վերոնշյալ փաստաթղթերը պետք է վավերացվեն տվյալ երկրի իրավասու մարմինների կողմից, հաստատվեն արտաքին գործերի նախարարության և վավերացվեն տվյալ երկրում Իրանի հյուպատոսության կողմից: Վերոնշյալ փաստաթղթերը պետք է թարգմանվեն պարսկերեն լեզվով, և անգլերեն բնօրինակները թարգմանված տարբերակների հետ միասին պետք է ներկայացվեն Ընկերությունների գրանցման վարչություն:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի շուկայում մրցակցությունը շատ բարձր է, ինչը պայմանավորված է Իրանի ազգաբնակչության կազմում երիտասարդության մեծ տոկոսով: Իրանի ազգաբնակչության 60 տոկոսը կազմում են 15-ից մինչև 28 տարեկան անձինք, որոնք բոլորն էլ մուտք են գործում աշխատանքի շուկա:

Իրանի Աշխատանքային օրենսգիրքը լիազորություն է վերապահում Աշխատանքի գերագույն խորհրդին երկրի յուրաքանչյուր հատվածի ու շրջանի բնակիչների համար սահմանել նվազագույն տարեկան աշխատավարձի չափը: Պետությունն ինքն է ընդունել, որ մի քանի տարի շարունակ նվազագույն աշխատավարձն անբավարար է եղել: Պաշտոնապես, նվազագույն աշխատավարձը պետք է բավարար լինի ընտանիքի ծախսերը հոգալու համար, ընդ որում այդ աշխատավարձը սահմանելիս հարկ է հաշվի առնել արժեզրկումը:

Ձևաբանորեն, աշխատողներին շնորհվում է արհմիություններ հիմնելու իրավունք, սակայն պետությունն անկախ արհմիություններին թույլ չի տալիս գործել: 1982 թվականին հիմնված «Աշխատողների տուն» անվամբ հայտնի ազգային կազմակերպությունը միակ արտոնագրված ազգային արհմիությունն է: «Աշխատողների տուն» կազմակերպությունն տնօրինությունն իր գործունեությունը համաձայնեցնում է Իսլամական աշխատավորների խորհուրդների հետ, որոնք ներառում են մի կողմից աշխատավորների ներկայացուցիչներ, իսկ մյուս կողմից՝ 35-ից ավել աշխատակից ունեցող արդյունաբերական, գյուղատնտեսական և սպասարկման ոլորտի կազմակերպությունների ղեկավարության մեկական ներկայացուցիչ: Թեև այս խորհուրդներին հաճախ հաջողվել է կանխել կրճատումները և աշխատանքից ազատելու դեպքերը, սակայն նրանք նաև որպես պետական վերահսկողության գործիք են հանդես գալիս: 1993 թվականին Իրանի խորհրդարանն օրենք է ընդունել, որով արգելվել են պետական մարմինների աշխատակիցների գործադուլները: Այնուհանդերձ, գործադուլների թիվը միանշանակ աճում է: Վերջին 2 տարվա զեկույցներում արձանագրվել են նավթային, տեքստիլային, էլեկտրատեխնիկական և մետաղյա արդյունաբերության աշխատակիցների գործադուլներ և գործազուրկների բողոքի ցույցեր:

ԻՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐՁ

Օտարերկրյա քաղաքացիները կարող են աշխատանքի ընդունվել Իրանում միայն Իրանի Իսլամական Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Երկրի ընդհանուր քաղաքականությունը միտված է աշխատանքային օրենսդրության պահանջների բավարարմանը և սեփական արդյունաբերական ու զարգացման ծրագրերում իրանական աշխատուժի հնարավորինս մեծ ներգրավմանը: Սակայն օտարերկրացիների գործիմացության անհրաժեշտության դեպքում նրանց աշխատանքի ընդունումը չի բացառվում: 1990թ. նոյեմբերի 20-ին հաստատված Աշխատանքային օրենսգրքի 120-րդ հոդվածի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացիներին թույլատրվում է աշխատել Իրանում միայն այն դեպքում, եթե առաջին՝ նրանց տրվի որոշակի աշխատանք կատարելու իրավունքով մուտքի արտոնագիր, և երկրորդ՝ նրանք համապատասխան օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով ստանան աշխատելու թույլտվություն: Բացառապես դիվանագիտական և հյուպատոսական առաքելություն իրականացնող օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության և դրա մասնաճյուղերի անձնակազմն ու փորձագետները, արտասահմանյան լրատվական գործակալությունների և մամուլի թղթակիցներն ակնհայտորեն ազատված են ման կանոնակարգերից՝ փոխադարձության սկզբունքով: Իրանի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաստատում է օտարերկրյա քաղաքացիներին որոշ տեսակի աշխատանքով զբաղվելու թույլտվությամբ մուտքի արտոնագրի տրամադրումը՝ հաշվի առնելով որոշակի պայմաններ: Եթե օտարերկրացուն անմիջապես աշխատանքի ընդունելը բխում է երկրի տարբեր արդյունաբերական ճյուղերի շահերից, ապա համապատասխան նախարարը գործը զեկուցում է Իրանի աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարին, և վերջինիս կողմից հաստատվելու դեպքում օտարերկրյա քաղաքացուն տրվում է աշխատելու ժամանակավոր թույլտվություն՝ շրջանցելով տվյալ աշխատանքը կատարելու իրավունքով մուտքի արտոնագրի տրման հետ կապված համապատասխան ձևաբանությունները: Ժամանակավոր թույլտվությունը վավերական է առավելագույնս երեք ամիս, իսկ այն երկարացնելու համար անհրաժեշտ է ստանալ Իրանի Օտարերկրացիների զբաղվածության հարցերով տեխնիկական խորհրդի հավանությունը: Նախքան օտարերկրյա փորձագետներին աշխատանքի ընդունելու մասին

որևէ պայմանագիր կնքելը գործատուները պարտավոր են պարզել Իրանի Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության կարծիքն այդ օտարերկրյա քաղաքացիներին աշխատանքի ընդունելու հնարավորության մասին: Իրանի Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությունը լիազորված է միջոցառումներ ձեռնարկել՝ անվավեր ճանաչելու այն օտարերկրյա քաղաքացիների աշխատելու թույլտվությունը, ովքեր չեն պահպանում իրավասու մարմինների կողմից սահմանված իսլամական սկզբունքները, երկրում գործող օրենքներն ու կանոնները, ինչպես նաև՝ միջանձնական հարաբերությունները:

Եթե գործատուներն աշխատանքի են ընդունում աշխատելու թույլտվություն չունեցող կամ անվավեր աշխատելու թույլտվություն ունեցող օտարերկրյա քաղաքացիներին, կամ նրանց ընդունում են այնպիսի աշխատանքի, որը նշված չէ վերջիններիս աշխատելու թույլտվության մեջ, կամ Իրանի Աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարությանը չեն տեղեկացնում օտարերկրացի քաղաքացիների հետ կնքած աշխատանքային պայմանագրի դադարեցման մասին, ապա այդ գործատուները դատապարտվում են 91 մինչև 180 օր ազատազրկման: Դատարանն ազատազրկման պատժամիջոցը սովորաբար փոխարինում է դրամական տուգանքով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ազա» աշխատանքի տեղավորման գործակալություն
Իրան, Թեհրան 19917-13117, Շեյխ Բահայի փող. 1,
Հեռախոս՝ +98 (21) 8806 57 58-60
Ֆաքս՝ +98 (21) 8803 61 58

Աթիե Ռոշան
Հասցե՝ Իրան, Թեհրան, Շարիաթի փող.,
Քեթաբի հրապարակ 40
Փոստարկը՝ Թեհրան 13145-139
Հեռախոս՝ +98-21- 2286 8032
Ֆաքս՝ +98-21- 2286 8669
Էլեկտրոնային փոստ՝ info@atiehroshan.com
Վեբ կայք՝ <http://www.atiehroshan.com/>

ԻՐԱՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Պետությունները պարտավոր չեն ընդունել օտարերկրյա քաղաքացիներին, սակայն վերջիններիս երկիր մուտք գործելու իրավունք շնորհելու դեպքում՝ պետությունները պետք է նրանց վերաբերեն մարդկային հարգանքով և քաղաքացիական իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան: Այնուհանդերձ, այս իրավունքներից օգտվելու շրջանակը ձևավորվում է յուրաքանչյուր երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական կողմնորոշմամբ: Այսպիսով, Իրանի Իսլամական Հանրապետությունում բնակվելու և աշխատելու մտադրություն ունեցող օտարերկրացիներն անշուշտ կցանկանային ավելի շատ տեղեկություններ ունենալ այդ երկրում իրենց իրավունքների ու իրավական կարգավիճակի մասին:

▶ Ո՞վ է օտարերկրյա քաղաքացի համարվում Իրանի օրենքով:

Այն անձինք, ովքեր Իրանի Քաղաքացիական օրենսգրքի 976-րդ հոդվածի դրույթներով Իրանի քաղաքացի չեն համարվում:

▶ Ինչպիսի՞ն է Իրանի մոտեցումն օտարերկրացիների իրավունքների հարցում

Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրության թիվ 22 Ազգունքի համաձայն՝ քաղաքացիությունից անկախ՝ մարդկանց պատվին, կյանքին, սեփականությանը, իրավունքներին, բնակարանին և աշխատանքին առնչվող հարցերին կարելի է միջամտել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Ավելին, Իրանի քաղաքացիական օրենսգիրքը հստակ սահմանում է, որ բա-ցառությամբ շատ քիչ դեպքերի՝ օտարերկրյա քաղաքացիներն իրավասու են օգտվել ըստ հարկի ճանաչված իրենց քաղաքացիական իրավունքներից:

▶ Իրանում օտարերկրացիների տեղաշարժման և բնակության կարգավորումը ներպետական օրենքներով

Իրանի բոլոր բնակիչները, ներառյալ՝ իրանցիներն ու օտարերկրացի քաղաքացիները բացառությամբ օրենքով հստակ նախատեսված դեպքերի՝ ենթարկվում են Իրանի Իսլամական Հանրապետության բազմազան օրենքներին ու կանոններին: Ինչպես իրանցիները, այնպես էլ օտարերկրացիներն օրենքով պաշտպանված են իրենց սեփականության կամ այլ սահմանված իրավունքների նկատմամբ միջամտությունից: Նրանք նաև իրավունք ունեն դա-տարան դիմել և արդարադատություն կամ բողոքի բավարարում պահանջել: Քաղաքացիական կարգավիճակին (օրինակ՝ ամուսնություն, ամուսնալուծություն, ժառանգում) առնչվող հարցերում Իրանի տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիները երկկողմանի համաձայնագրերով նախատեսված սահմաններում հետևում են իրենց համապատասխան պետության օրենքներին:

▶ Ինչպե՞ս կարող են օտարերկրացիներն անշարժ գույք ձեռք բերել

Բնակություն հաստատելու, ձեռնարկատիրական կամ արդյունաբերական գործունեություն մեկնարկելու նպատակով Իրանում անշարժ գույք սեփականաշնորհելու համար օտարերկրյա քաղաքացիները պետք է հատուկ թույլտվություն ստանան երկրի կառավարությունից: Անշարժ գույք ձեռքբերելու թույլտվություն ստանալու պահից ի վեր նրանք օգտվում են սեփականության նույն իրավունքներից, ինչ՝ Իրանի քաղաքացիները: Սակայն մշտական կացության վայրը (բնակության վայրը) փոխելու, այսինքն՝ Իրանից այլ երկիր տեղափոխվելու դեպքում օտարերկրացին պետք է իր անշարժ գույքի սեփականության իրավունքը փոխանցի որևէ իրանցու կամ պատշաճ իրավասությամբ օժտված օտարերկրացու:

▶ Արդյոք բոլո՞ր դեպքերում անշարժ գույքի սեփականության իրավունքի նախապայմանը Իրանում օտարերկրացու մշտական բնակությունն է

▶ Ո՛չ: Գոյություն ունի բացառություն երկրում մշտապես չբնակվող անձանց օգտին: Իրանի նախարարների խորհուրդը կարող է բնակարանի սեփականության իրավունք շնորհել այն օտարերկրացիներին, ովքեր չունեն երկրում մշտական կացության թույլտվություն, սակայն պարբերաբար այցելում են Իրան զբոսաշրջիկի կարգավիճակով և սեզոնային հանգստի նպատակով:

▶ Կացության թույլտվության ինչպիսի՞ տեսակներ կարող են Իրանում ունենալ օտարերկրացիները

Գոյություն ունի կացության թույլտվության երկու տեսակ՝ մշտական և ժամանակավոր: Եթե օտարերկրացիները մտադիր են մշտական բնակություն հաստատել Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում, ապա նրանց շնորհվում է մշտական կացության թույլտվություն: Այլապես նրանց կացությունը ժամանակավոր է համարվում:

▶ **Արդյոք օտարերկրացիներին թույլատրվում է գույք վարձակալել**

Օտարերկրացիները՝ Իրանի քաղաքացիների նման, իրավունք ունեն բնակություն հաստատելու կամ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալել տներ, բնակարաններ, գրասենյակներ և այլ տարածքներ: Եթե վարձակալության պայմանագիրը կազմվում է նոտարի կողմից, իսկ վարձակալման ժամկետը գերազանցում է հինգ տարին, ապա հարկ է ստանալ գույքի կադաստրի համաձայնությունը:

▶ **Արդյոք գործարարությամբ զբաղվող օտարերկրացիներն ունեն՞ ոչ նյութական արժեք ձեռք բերելու գործարքային իրավունք**

Իրանում խանութների, գործարանների, գրասենյակների, ինչպես նաև ձեռնարկատիրական և առևտրային նշանակության այլ հաստատությունների գործարքներում ոչ նյութական արժեքները սովորաբար փոխանցվում են: Օտարերկրացիների՝ ոչ նյութական արժեքների իրավունքը սովորական երևույթ է, և նրանց թույլատրվում է գնել և վաճառել այն արժեքները, որոնք գործարարը կուտակում է սպառողների կողմից ճանաչված լինելու շնորհիվ:

▶ **Արդյոք գոյություն ունեն՞ նաև հատուկ պահանջներ, որոնք օտարերկրացիները պետք է բավարարեն շարժական գույք ձեռք բերելու համար**

Ոչ, նման պահանջներ գոյություն չունեն: Օտարերկրացիներն Իրանի քաղաքացիների նման նույն եղանակով կարող են գնել և վաճառել մեքենաներ, գորգեր, հեռուստացույցներ, հեռախոսագծեր և շարժական գույքի այլ պարագաներ:

▶ **Ինչպե՞ս է օտարերկրացուն պատկանող սեփականությունը պաշտպանվում բռնագրավումից**

Միջազգային իրավունքով ճանաչվում է յուրաքանչյուր պետության մասնավոր սեփականությունը բռնագրավելու իրավունքը, որը, սակայն, պետք է ուղեկցվի պատշաճ փոխհատուցմամբ: Հենց այդ կանոնի վրա են հիմնված Իրանի օրենքները: Օրինակ, օտարերկրյա ներդրումների այն դեպքերում, երբ օտարերկրացի ներդրողը հատուկ հռչակագրով գրկվում է սեփականության իրավունքից, Իրանի կառավարությունն արդար փոխհատուցում է երաշխավորում:

▶ **Ինչպիսի՞ իրավական պաշտպանության է արժանանում շրջանառվող արտասահմանյան կապիտալը**

Իրանի Իսլամական Հանրապետության Արտասահմանյան ներդրումներ ներգրավելու և պաշտպանելու մասին օրենքով պաշտպանվում է երկիր ներմուծվող ամբողջ արտասահմանյան կապիտալը և դրանից ստացված շահույթը: Տարբեր օրենքներով, այդ թվում՝ հարկմանն առնչվող օրենքներով երաշխավորված կապիտալ ներդրումներ կատարելու օրինական իրավունքը, հարկերից ազատումն ու բարենպաստ պայմանները կիրառելի են նաև արտասահմանյան ներդրողների պարագայում: Օրինակ, Ազատ առևտրաարդյունաբերական գոտիներում տնտեսական գործունեություն ծավալելու ցանկություն ունեցող Իրանի քաղաքացիների պես՝ օտարերկրյա ներդրողներն ունեն տվյալ տարածաշրջանում աշխատանքի և սոցիալական պաշտպանության ճկուն կանոններից օգտվելու նույն իրավունքները:

▶ **Օտարերկրացիների՝ մտավոր սեփականության իրավունքներ**

Իրանում գործում է առևտրային ապրանքանիշերի ու պատենտների մասին սեփական օրենքը, ընդ որում Իրանն անդամակցում է Արդյունաբերական սեփականության պաշտպանության փարիզյան կոնվենցիային: Կոնվենցիայի կանոններով ճանաչվում և պաշտպանվում են օտարերկրացիների՝ մտավոր

սեփականության իրավունքները: Ինչ վերաբերում է հեղինակային իրավունքներին, ապա Իրանը չի անդամակցում Գրական և արվեստի գործերի պաշտպանության մասին Բեռնի կոնվենցիային, սակայն հեղինակային իրավունքի հարցերը կարգավորող ներպետական օրենքով պաշտպանվում են Իրանի Իսլամական Հանրապետությունում արվեստի, գրականության կամ տեխնիկայի բնագավառներում ստեղծագործող իրանցիների և օտարերկրյա քաղաքացիների իրավունքները: Հենց այս օրենքի հիման վրա Իրանում վճիռ կա-յացվեց համակարգչային ծրագրերի հեղինակների օգտին:

▶ **Ի՞նչ հիմնական իրավունքներից է օգտվում մասնաճյուղի կամ նման կարգով Իրանում գործունեություն մեկնարկող օտարերկրյա ընկերությունը**

Օտարերկրյա ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության վրա տարածվում են աշխատանքի, սոցիալական ապահովագրման, հարկման և այլ ոլորտների Իրանի օրենքները: Կառավարությունը նույն եղանակով է պաշտպանում օտարերկրյա ընկերության գրանցված մասնաճյուղի կամ ներկայացուցչության օրինական իրավունքները, ինչ՝ իրանական ընկերությունների և հաստատությունների դեպքում:

▶ **Արդյոք օտարերկրացիներն ունեն՞ա աշխատանքի ընդունվելու իրավունք**

Օտարերկրյա քաղաքացիները կարող են աշխատանքի ընդունվել Իրանում միայն Իրանի Իսլամական Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված դրույթների շրջանակներում: Երկրի ընդհանուր քաղաքականությունը միտված է աշխատանքի պահանջարկի բավարարմանը ներպետական աշխատուժով: Այդուհանդերձ, արտասահմանցիների աշխատանքի ընդունվելը չի բացառվում, երբ անհրաժեշտ է նրանց գործիմացությունը: Աշխատելու թույլտվությունը տրամադրվում, երկարացվում կամ նորացվում է մեկ տարի ժամկետով: Հատուկ դեպքերում օտարերկրացիներին առնվազն երեք ամիս վավերական աշխատելու ժամանակավոր թույլտվություն է տրվում՝ շրջանցելով համապատասխան ընթացակարգը: Ի՞նչ հարկեր են վճարում օտարերկրյա քաղաքացիները: Եկամտահարկի վճարման, ինչպես նաև հարկման արտոնությունների և հարկումից ազատվելու տեսակետից օտարերկրացիները գրեթե նույն պարտականություններն ու իրավունքներն ունեն, ինչ՝ Իրանի քաղաքացիները: Այնուհանդերձ, գոյություն ունեն աննշան բացառություններ:

▶ **Արդյոք գոյություն ունեն՞ կրկնակի հարկում բացառող երաշխիքներ**

Կրկնակի հարկումը կանխելու նպատակով Իրանի կառավարությունը որոշ այլ երկրների հետ համաձայնագրեր է ստորագրել Իրանում աշխատող նրանց քաղաքացիների պաշտպանության համար: Բացի այդ, մշակվել են նաև այլ պայմաններ: Օրինակ, փոխադարձության սկզբունքով որոշ երկրների ավիա-ընկերություններ և նավագնաց ընկերություններն ազատված են ուղևորների տեղափոխման ու բեռնափոխադրման արդյունքում Իրանում աշխատած գումարից եկամտահարկ վճարելու պարտականությունից:

▶ **Արդյոք Իրանի սոցիալական ապահովագրության համակարգը պաշտպանում է օտարերկրյա բնակիչերին**

Իրանում աշխատող օտարերկրացիները հիմնականում օգտվում են սոցիալական ապահովագրության համակարգով երաշխավորված նույն առավելություններից, ինչ Իրանի քաղաքացիները, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ պայմանավորվածություն է ձեռք բերվում Իրանի և այլ երկրների միջև կնքված երկկողմանի կամ բազմակողմանի պայմանագրերին և համաձայնագրերին համապատասխան: Իրանում գտնվող օտարերկրյա քաղաքացիների իրավունքներ:

